FRIEDRICH EBERT STIFTUNG
Երևան

Տնտեսական վիճակը Հայաստանում

Հնարավորություններն ու մարտահրավերները 2017թ.

ԿՈՄՊԱՍՍ ԿԵՆՏՐՈՆ, ՀԱՅԱՍՏԱՆ

Փետրվար 2017թ.

- 2015թ.-ի հունվարի 2-ից ի վեր Հայաստանն անդամակցում է Եվրասիական տնտեսական միության մաքսային միությանը: ԵԱՏՄ 4 անդամ պետությունների միջև առևտրաշրջանառությունը 2015թ.-ին նվազեց 17,1% - ով, իսկ ահա 2016թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում աճ արձանագրվեց: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատած՝ Հայաստանից դեպի ԵԱՏՄ երկրներ արտահանումն աճել է 55,2%-ով:

- Դրամական փոխանցումները ֆիզիկական անձանց միջև մեծ դեր են խաղում Հայաստանի տնտեսությունում: Վերջին 10 տարիների պաշտոնական տրանսֆերտների ներհոսքը կազմել է տարեկան ՀՆԱ-իմոտ 20%-ը: 2015թ.-ին նկատվել է մասնավոր տրանսֆերների զգալի անկում՝ նախորդ տարվա հետ համեմատած՝ 11,4% ներհոսքի նվազում: Դրամական փոխանցումների 62%-ը գալիս էր Ռուսաստանի Դաշնությունից, և Ռուսաստանի տնտեսության վատթարացումն Հայաստանում արտահայտվեց դրամական ներհոսքի նվազմամբ: Այս միտումը շարունակվեց նաև 2016թ.:

- Հասարակության շրջանում այսօր լուրջ անվստահություն կա ներկայիս իշխանությունների՝ տնտեսական հիմնահարցերի շուրջ դիրքորոշման հանդեպ: 2015թ. գրանցվեց ՀՆԱ-ի 3% աճ, իսկ 2016թ. տնտեսական ակտիվության ցուցանիշը սկսեց նվազել: Գործազրկությունը գնալով աճում էր՝ 2015թ.-ին կազմելով 18,5 %, ինչը վերջին 5 տարիների ամենաբարձր ցուցանիշն է համարվում: Սոցիալ-տնտեսական այս իրավիճակը ուղեկցվում էրարտագաղթով: Ըստ 2015թ-ի վիճակագրական տվյալների՝ քաղաքացիների 25% ապրում էր արտերկրում: 2017թ.-ը Հայաստանի համար մարտահրավերներով լի տարի կլինի. ստուգատես իշխանությունների համար, վերջիններիս կամքն ու ճկունությունը տնտեսական բարեփոխումների կատարման գործում:

1. ԸՆԹԱՑԻԿ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1.1 Տնտեսական աճ և ՀՆԱ

2015թ. Հայաստանի համախառն ներքին արդյունքը ընթացիկ գներով կազմել է 5.032 տրիլիոն դրամ: 2016թ. երեք եռամսյակների ՀՆԱ-ն կազմել է 3.543 տրիլիոն դրամ (Գրաֆիկ 1):

Հայաստանում վերջին երկու տարիներին դիտված տնտեսական աճի դանդաղեցումը շարունակվում է նաև 2016թ.: 2014թ. նախորդ տարվա 7.2%-ի փոխարեն դիտվել է 3.5%, 2015թ.՝ 3.0% տնտեսական աճ[1]: 1 շնչի հաշվով ՀՆԱ-ն 2015թ. կազմել է 1 մլն 674 հազար դրամ կամ 3504.3 ԱՄՆ դոլար:

2016թ. առաջին երեք եռամսյակների հրապարակված տվյալներով նախորդ նույն ժամանակահատվածի նկատմամբ իրական աճը կազմել է 0.41%: Առաջին եռամսյակում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ գրանցվել է իրական ՀՆԱ-ի 4.3% աճ, երկրորդ եռամսյակում՝ 1.5% աճ, իսկ ահա երրորդ եռամսյակում գրանցվել է 2.6%-ի անկում(Գրաֆիկ 2):

2016թ. հուլիս ամսից սկսած տնտեսական ակտիվության ցուցանիշը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ընդունել է 100%-ից ցածր ցուցանիշ՝ հոկտեմբերին նվազելով մինչև 92.2%[2]: Կառավարության կանխատեսված 2.2% տնտեսական աճին հասնելու համար չորրորդ եռամսյակում Հայաստանում պետք է ստեղծվի 2015թ. նույն ժամանակահատվածից ոչ պակաս ներքին արդյունք: Հաշվի առնելով ՀՀ տնտեսությունում տարեվերջին գրանցվող ակտիվացումները՝ 2016թ. իրական ՀՆԱ-ի աճը կկազմի 0.8-1% (Գրաֆիկ 3):

Բ. Գնաճ

2000 թվականից ի վեր առաջին անգամ Հայաստանում գրանցվում է գնանկում: 2016թ. հունվար-նոյեմբեր ամիսներին Հայաստանում 2015թ. դեկտեմբերի նկատմամբ դիտվել է 2.2% գնանկում[3]: Փետրվարից սկսված գնանկումն իր ամենամեծ արտահայտությունն է ստացել հուլիս ամսին՝ -2.3%: Հաջորդող ժամանակաշրջանում գրանցվել է որոշակի գնաճ, որը նոյեմբերին հասել է մինչև 1%-ի՝ հոկտեմբերի համեմատ: 2014թ. գրանցվել էր 3% գնաճ, նախորդ տարի՝ 3.7%: 2016թ. պետական բյուջեի մասին օրենքով գնաճի նպատակային ցուցանիշ էր վերցվել 4+/-1.5% գնաճը:

Ընթացիկ տարում գնանկումը մեծապես պայմանավորված է եղել պարենային և ոչ պարենային, ինչպես նաև սպառման ապրանքների գնանկումով: Ծառայությունները գրանցել են ընդամենը 0.9% գնանկում, իսկ ոգելից խմիչքները և ծխախոտը արձանագրել 1% գնաճ:

Գ. Ընթացիկ հաշիվ և արտաքին առևտուր

2016թ. առաջին երեք եռամսյակների ընթացքում Հայաստանի առևտրաշրջանառությունը արձանագրել է 5.7% աճ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ հասնելով 3մլրդ 588 մլն դոլարի[4]: 2015թ. գրանցված 29% նվազումից հետո ներմուծման ցուցանիշը տարվա առաջին 9 ամիսներին էականորեն չի փոխվել (2.295 մլրդ դոլար, 0.8% նվազում), իսկ ահա արտահանումը աճել է 19.6%-ով և կազմել 1.293 մլրդ դոլար: Այնուամենայնիվ, վերջին 4 տարում արտահանումը շարունակում է տատանվել 1.5 մլրդ դոլարի սահմաններում:

Առեւտրային հաշվեկշիռը շարունակում է պահպանել բացասական սալտո, սակայն սալտոն երկրորդ տարին շարունակ նվազման միտում ունի: 2015թ. նախորդ տարվա համեմատ առևտրային հաշվեկշռի պակասուրդը 2.8 մլրդ դոլարից նվազել էր մինչև 1.7 մլրդ դոլար: 2016թ. երեք եռամսյակների արդյունքով պակասուրդը կազմել է 1 մլրդ դոլար՝ 230 մլն դոլարով ավելի քիչ, քան նախորդ տարվա նույն ժամանակահատվածում: Ցավոք, պակասուրդի կրճատումը տրվում է ի հաշիվ ներմուծման կրճատման, իսկ արտահանման աճը

1. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016, ԱՎԾ՝ http://armstat.am/file/doc99499428.pdf

2. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2016թ. հունվար հոկտեմբերին, ԱՎԾ՝ http://armstat.am/am/?nid=82&id=1842

3. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2016թ. հունվար հոկտեմբերին, ԱՎԾ՝ http://armstat.am/am/?nid=82&id=1842

4. ՀՀ սոցիալ-տնտեսականվիճակը 2016թ. հունվար-հոկտեմբերին, ԱՎԾ http://armstat.am/file/article/sv_10_16a_411.pdf

Գրաֆիկ 1. ՀՀ ՀՆԱ-ի կառուցվածքը՝ ըստ տնտեսության ճյուղերի



զգալի փոփոխություն չի առաջացնում:

Արտահանման կառուցվածքում էական կշիռ ունեցող ապրանքային բաժինների մեջ աճ են գրանցել պատրաստի սննդի արտադրանքը՝ 27.6% և հատկապես թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, թանկարժեք մետաղների արտադրանքը՝ 89.6% (Աղյուսակ 1):

Արտահանման կառուցվածքում խոշորագույն հոդվածի՝ հանքահումքային արտադրանքի արտահանումը նվազել է 4.7%-ով:

Հանքահումքային արտադրանքը հանդիսանում է առաջատարը նաև ներմուծման կառուցվածքում՝ 17.76%, ընդ որում՝վերջինիս ներմուծումը ևս նվազել է՝ 10.3%-ով: Ներմուծման մաս կազմող խոշոր հոդվածներից նվազել են նաև բուսական ծագման արտադրանքը՝ 18%-ով, ոչ թանկարժեք մետաղները և դրանցից պատրաստված իրերը՝ 20.6%-ով, վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցները՝ 17.9%-ով:

ՀՀ-ից արտահանման ամենամեծ ծավալները շարունակում են ուղղվել դեպի Ռուսաստան՝ կազմելով հունվար-սեպտեմբեր ամիսներին ըն-դամենը արտահանման 20.1%-ը (Գրաֆիկ 4, 5): Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ընթացքում արտահանումը դեպի ՌԴ աճել է 44.8%-ով: Պետք է փաստել նաև, որ դեպի ԵՄ երկրներ արտահանումը շարունակում է գերազանցել դեպի ԱՊՀ երկրներ արտահանմանը:

Ներմուծման կառուցվածքում կրկին գերակշռում է Ռուսաստանի Դաշնության բաժինը՝ 21.4%, որտեղից ներմուծված ապրանքների և ծառայությունների ծավալը 2016թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ չնչին աճ է գրանցել՝ 1.2%: Նշված ժամանակահատվածում 50% աճ է գրանցել ներմուծումը Վրաստանից՝ հասնելով 168 մլն դոլարի, ինչը կազմում է ներմուծման 7.8%-ը: Ներմուծման կառուցվածքում երրորդը ԱՄԷ-ն է՝ 5.54%, որը արդյունք է այս երկրից ներմուծ-ման 27.1% աճի: Ներմուծման կառուցվածքում շարունակում են մոտ 4-5% տեսակարար կշիռ պահ-

պանել Գերմանիան, Չինաստանը, Իրանը և Շվեյցարիան: Ներմուծումը ԱՊՀ երկրներից աճել է 5.4%-ով, ԵՄ երկրներից՝ նվազել 5.2%: Այնուամենայնիվ, ԱՊՀ և ԵՄ երկրներին բաժին է հասնում ՀՀ ներմուծման մոտ 25-ական տոկոսը:

Հայաստանի վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի բացասական մնացորդը վերջին տարիներին շարունակաբար կրճատվում է: 2010թ. այն կազմում էր 1.26 մլրդ դոլար՝ նույն տարվա ՀՆԱ-ի -13.62%-ի չափով[5]: Մինչև 2014թ. այն նվազել է մինչև -7.5%-ի, իսկ 2015թ. կտրուկ իջել է մինչև -2.64%՝ կազմելով ընդամենը 279 մլն դոլար:

Ընթացիկ հաշվի դիֆիցիտի կրճատումը տեղի է ունեցել վերևում նշված ներմուծման ծավալների աննախադեպ կրճատման հաշվին: Նույն միտումը դիտվել է նաև 2016թ. առաջին կիսամյակի ժամանակ, երբ ընթացիկ հաշվի դեֆիցիտը կրճատվել է 29.67%-ով՝ կրկին ապրանքային դեֆիցիտի նվազման հաշվին:

Գրաֆիկ 2. ՀՆԱ-ի իրական աճը՝ ըստ կառուցվածքի



Դ. Արտաքին պարտք

ՀՀ համախառն արտաքին պարտքը 2015թ. դեկ-տեմբերի 31-ի դրությամբ կազմել է 8.927 մլրդ դոլար, 2016թ. հունիսի 30-ի դրությամբ՝ 8.950 մլրդ դոլար[6]: 2015թ. ավարտին ՀՀ արտաքին պարտքի 49.9%-ը՝ 4,455 մլրդ դոլար կազմում էր Կառավարության և Կենտրոնական բանկի պարտքը (համապատասխանաբար՝ 3,854 և 0.6 մլրդ դոլար), 2016թ. սեպտեմբերի վերջին այն հասել էր 4,590 մլրդ դոլարի: 2015թ. ավարտին ՀՀ կառավարության և ԿԲ-ի արտաքին պարտքը կազմել է նույն տարվա ՀՆԱ-ի 42.18%-ը:

ՀՀ պետական վարկերի կառուցվածքում 49.07%-ը կազմում են Համաշխարհային բանկից և Գյուղատնտեսության զարգացման գործակալությունից ներգրավված միջոցները, 12-ական տոկոս՝ ԱՄՀ-ից և Ասիական Զարգացման բանկից ստացած վարկերը: Արտաքին պետական պարտքի կառուցվածքում մեծ կշիռ ունեն նաև Ճապոնիան (7.83%) և Գերմանիան (5.5%) (Գրաֆիկ 6):

5. ՀՀ վճարային հաշվեկշիռը, ԿԲ՝ https://www.cba.am/Storage/AM/downloads/stat_data_arm/BOP_1993-2016_arm_for%20siteBPM6_rev.xls

6. ՀՀ համախառն արտաքին պարտքի դիրքեր, ԿԲ՝ նույն հղմամբ

Գրաֆիկ 3. ՀՆԱ-ի հավելաճին նպաստման չափը



Ե. Օտարերկրյա ուղղակի ներդրումներ

2015թ. Հայաստանում օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալը նվազել է 223.8 մլն դոլարով և կազմել 180.5 մլն դոլար: Նույն տարում իրական հատվածում կատարած օտարերկրյա ուղղակի ներդրումներից զուտ հոսքերը կազմել են 70.418 մլրդ դրամ՝ 46.783 մլրդ դրամով պակաս, քան 2014թ.: 2016թ. ներդրումների նվազումը շարունակվել է: Մասնավորապես, հունվար-սեպտեմբեր ամիսներին օտարերկրյա ուղղակի ներդրումների զուտ հոսքը կազմել է ընդամենը 44.432 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազելով 44.6%-ով (Գրաֆիկ 7):

Քանի որ Հայաստանի Ազգային վիճակագրական ծառայության կողմից 2014թ. մեթոդաբանության փոփոխությունը թույլ չի տալիս համադրել ներկա ցուցանիշները նախորդող տարիների հետ, օգտագործել ենք Համաշխարհային բանկի տրամադրած վիճակագրությունը: Այսպես, օտարերկրյա ուղղակի ներդրումները Հայաստանում 2009թ. ի վեր տարեկան կտրվածքով աճել են միայն 2011 և 2014թթ.:

Ընդհանուր առմամբ, 2015թ. ներդրումների ծավալը 2007թ. նկատմամբ կրճատվել է 73%-ով: Ամենամեծ անկումը գրանցվել է հենց 2015թ.՝ 55.87%[7]:

2016թ. հունվար-սեպտեմբեր ամիսների տվյալներով՝ օտարերկրյա ուղղակի ներդրումների կառուցվածքում առաջատարներն են Կիպրոսը (34.878 մլրդ դրամ), Միացյալ Թագավորությունը (32.276 մլրդ դրամ) և Լյուքսեմբուրգը (29.049 մլրդ դրամ): 2006-11թթ. օտարերկրյա ներդրումների կառուցվածքում առաջատար Ռուսաստանի հետ զուտ հոսքերի ծավալի ցուցանիշն ունի բացասական մեծություն՝ -55.379 մլրդ դրամ: Նախորդ տարվա հունվար սեպտեմբեր ամիսների նկատմամբ ամենամեծ անկումն ունեցել է հենց Ռուսաստանից օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալը՝ -69.814 մլրդ դրամ:

7. World Bank Databank, Foreign direct investment, net inflows (BoP, current US$), դիտված է՝ 14/12/2016

Զ. Արտարժութային քաղաքականություն

Հայաստանի Հանրապետությունում արժութային կարգավորում իրականացնող Կենտրոնական բանկը վարում է ազատ լողացող փոխարժեքի քաղաքականություն[8]: 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ԱՄՆ 1 դոլարը արժեցել է 483.75 դրամ, 2016թ. նոյեմբերի 30-ի դրությամբ՝ 478.52 դրամ: 2010թ. դեկտեմբերի վերջին օրվա համեմատ 2016թ. նոյեմբերի վերջին փոխարժեքն աճել է 31.6%-ով, տարեկան միջին փոխարժեքը՝ 28.5%: Դրամի արժեքը ամենամեծ ցնցումը վերջին տարիներին գրանցվել է 2014թ. դեկտեմբերին, երբ նավթի գների անկման, ռուսական ռուբլու փոխարժեքի անկման և մի շարք այլ տնտեսական հետևանքներով դոլարի փոխարժեքը 2 ամսվա ընթացքում 409.98 դրամից հասավ մինչև 463.53 դրամի: 2015-2016թթ. աճը շարունակվեց և հասավ մինչև 493.64 դրամի՝ 2016թ. փետրվարի 29-ի դրությամբ: Հաջորդող ժամանակաշրջանում դրամը որոշակի արժևորվեց և նոյեմբերի վերջին կազմեց 478.52 դրամ[9]:

Կենտրոնական բանկի կողմից արժութային կարգավորման համար կիրառվել են մի շարք գործիքներ, մասնավորապես արտարժութային ինտերվենցիաներ: Այսպես, 2014թ. դրամի արժեզրկման ժամանակ ԿԲ-ն իրականացրել է 355 միլիոն դոլարի արտարժույթի վաճառք՝ ավելի քան 7 անգամ շատ, քան 2013թ.: Գրեթե նույն մակարդակի՝ 321 մլն դոլարի վաճառք կատարվել է 2015թ, և միայն 2016թ. է վաճառքի ծավալը կրճատվել՝ առաջին 10 ամիսների ընթացքում կազմելով 152 մլն դոլար: Սակայն, ինտերվենցիաների առավել մեծ ծավալ է սպասվում տարվա վերջին ամիսներին, երբ դրամի վրա ճնշումը աճում է (Գրաֆիկ 8):

Չնայած արժութային ինտերվենցիաների մեծ ծավալին՝ ԿԲ-ին հաջողվել է համեմատաբար կայուն մակարդակի վրա պահել ՀՀ միջազգային պահուստները:

Աղյուսակ 1. ՀՀ արտահանումն՝
ըստ ապրանքային բաժինների

Արտահանումն ըստ ապրանքային բաժինների 2016թ. հունվար-սեպտեմբերին			
	Ծավալը (հազ. դոլար)	Աճը (%)	Կշիռը (%)
Հանքահումքային արտադրանք	341691.4	-4.7	26.4
Պատրաստի սննդի արտադրանք	283202.4	27.6	21.9
Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր	267788.2	89.6	20.7
Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր	158052.6	-8.7	12.2
Մանածագործական իրեր	72203.8	46.2	5.6
Այլ ապրանքային բաժիններ	170122.7	23.8	13.2
Ընդամենը	**1293061.1**	**19.6**	**100**

8. ՀՀ ԿԲ պաշտոնական կայք՝ https://www.cba.am/am/SitePages/mpforeignexchangepolicy.aspx

9. Դրամի նկատմամբ որոշ արժույթների միջին ամսական փոխարժեքը, ԿԲ https://www.cba.am/Storage/AM/downloads/stat_data_arm/8.%20Exchange%20rates_arm.xls

2013թ. դեկտեմբերին միջազգային պահուստների ծավալը կազմել է 2251.61 մլն դոլար, սակայն 2014թ. դեկտեմբերին նվազել մինչև 1489.44 մլն դոլարի: 2015թ. ընթացքում միջազգային պահուստները կազմել են 1775.29 մլն դոլար, իսկ 2016թ. նոյեմբերին կազմել 1752.38 մլն դոլար: Նշենք, որ ՀՀ միջազգային պահուստները 99.6%-ով կազմված են արտարժութային պահուստներից, և 0.4% կազմում են ՀՓԻ-ով միջոցները: Ոսկով արտահայտված միջազգային պահուստներ ՀՀ-ն չունի[10] (Գրաֆիկ 9):

է . Դրամական փոխանցումներ

Ինչպես նախկին ԽՍՀՄ շատ երկրներում, Հայաստանում ևս ֆիզիկական անձանց տրանսֆերտները մեծ դերակատարություն ունեն տնտեսությունում: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ՀՀ ՀՆԱ-ն ուղղակի կապվածություն ունի տնտեսություն մտած տրանսֆերտների ծավալից[11]: Վերջին 10 տարիներին ֆիզիկական անձանց կողմից դրամական փոխանցումները կազմել են տարեկան ՀՆԱ-ի միջինը 20%-ի սահմաններում: Հարկ է նշել, որ դրամական փոխանցումների վիճակագրությունը վերաբերում է միայն բանկերի միջոցով կատարված փոխանցումներին, մինչդեռ դրամական բավականին մեծ զանգված աշխատանքային միգրանտները Հայաստան են փոխանցում առձեռն: 2015թ. տեղի է ունեցել մասնավոր տրանսֆերտների զգալի անկում:

Դրամական փոխանցումների ներհոսքը նախորդ տարվա համեմատ նվազել է 11.4%-ով և կազմել է 780 մլրդ դրամ՝ ՀՆԱ-ի ընդամենը 15.5%-ի չափ: Դրամական փոխանցումների ներհոսքը նախորդ տարվա համեմատ նվազել է 11.4%-ով և կազմել է 780 մլրդ դրամ՝ ՀՆԱ-ի ընդամենը 15.5%-ի չափ: Ընդ որում՝ 2014թ. ևս գրանցվել էր արտերկրից դրամական փոխանցումների նվազում՝ 6.55%-ով:

Դրամական փոխանցումների ծավալների նվազումը շարունակվել է նաև 2016թ.: Հունվար-հոկտեմբեր ամիսներին դրամական միջոցների ներհոսքը կազմել է 574 մլրդ դրամ՝ 9.9%-ով պակաս, քան 2015թ. նույն ժամանակահատվածում: Ընթացիկ տարվա հունվար-հոկտեմբերին փոխանցումները 23%-ով ավելի պակաս են եղել, քան 2014թ. նույն ժամանակահատվածում:

Նշենք, որ ի տարբերություն դրամական միջոցների ներհոսքի՝ դրանց արտահոսքի ծավալները վերջին տարիներին համեմատաբար կայուն են: 2015թ. գրանցվել է 363.9 մլրդ դրամի դրամական միջոցների արտահոսք՝ ընդամենը 3.44%-ով պակաս, քան 2014թ.: 2015թ. զուտ ներհոսքը կազմել է 416 մլրդ դրամ:

Հայաստանում ֆիզիկական անձանց դրամական հոսքերի գլխավոր ուղղությունները Ռուսաստանի Դաշնությունն ու ԱՄՆ-ն են: 2015թ. դրամական ներհոսքի 62%-ն ապահովել է Ռուսաստանը, 10.8%-ը՝ ԱՄՆ-ը:

Գրաֆիկ 4. ՀՀ արտահանման աճը՝ ըստ երկրների



10. ՀՀ միջազգային պահուստների կառուցվածքը (ամսական), ԿԲ https://www.cba.am/Storage/AM/downloads/stat_data_arm/7.International%20reserves_arm.xls

11. Remittances in Armenia: Dynamic Patterns and Drivers, IMF` https://www.imf.org/external/country/arm/rr/2012/062012.pdf

Դրամական փոխանցումների ծավալներում վերջին կտրուկ փոփոխություններն էլ հիմնականում կախված են Ռուսաստանի տնտեսության վիճակի վատթարացումով, ու այս երկրից հոսքերը 2015թ. կրճատվել են 25%-ով, 2016թ. առաջին 10 ամիսներին՝ ևս 13%-ով: Միևնույն ժամանակ, 2015թ. դրամական միջոցների արտահոսքը ավելացել է 29.6%, իսկ 2016թ. հունվար-հոկտեմբերին՝ ևս 29.9%-ով: Ինչ վերաբերում է ԱՄՆ-ին, այստեղ տեղի է ունեցել ճիշտ հակառակը՝ ներհոսքի ավելացում և արտահոսքի նվազում, սակայն այդ փոփոխությունները էական ազդեցություն չեն ունեցել զուտ ներհոսքի վերջնական ցուցանիշի վրա:

Գրաֆիկ 5. ՀՀ արտահանման ծավալը՝ ըստ երկրների



Ը. ԵՏՄ անդամակցության տնտեսական հետևանքները 2016թ. դրությամբ

2015թ. հունվարի 2-ից Հայաստանը անդամակցել է Եվրասիական տնտեսական միության մաս կազմող Մաքսային միությանը: Այս տնտեսական միությանը անդամակցումը ենթադրում էր անդամ երկրների միջև մաքսային դրույքաչափերի զրոյացում և երրորդ երկրների հետ միասնական մաքսային դրույքաչափի կիրառում: Սակայն, Հայաստանը գրեթե բոլոր ԱՊՀ երկրների հետ մինչ այդ էլ ուներ պայմանագրեր ազատ առևտրի մասին, և նրանց հետ առևտրում մինչ այդ էլ կիրառում էր համեմատաբար ցածր կամ զրոյական դրույքաչափեր, իսկ ՄՄ-ի անդամ չհանդիսացող երրորդ երկրների հետ առևտրում

Հայաստանին շուրջ 700 ապրանքատեսակների գծով մինչև 2017թ. տրված է արտոնություն՝ կիրառելու նույն դրույքաչափերը, ինչ սահմանված է եղել մինչև միությանն անդամակցությունը: Այս պատճառներից ելնելով՝ դժվար է 2015թ. և 2016թ. առաջին երեք եռամսյակների առևտրաշրջանառության արդյունքներով դատել Մաքսային Միությանն անդամակցության տնտեսական հետևանքների մասին:

Այսպես, Մաքսային միությանն անդամակցության հենց առաջին տարվա՝ 2015թ. արդյունքներով անդամ 4 երկրների հետ առևտրաշրջանառությունը նվազել է 17.1%-ով: Մասնավորապես, արտահանումը նվազել է 21%-ով և կազմել 256.2 մլն դոլար, իսկ ներմուծումը՝ նվազել 16.1%-ով՝ կազմելով 968.5 մլն դոլար: Ընդ որում, նվազել են բոլոր երկրների հետ թե արտահանման, թե ներմուծման ցուցանիշները, բացառությամբ Ղրղզստանից ներմուծման ծավալի, որը բացարձակ արժեքով շատ փոքր թիվ է՝ ընդամենը 126000 դոլար[12]: Նման զարգացումների պատճառը ՄՄ անդամ երկրներում տնտեսական իրավիճակի վատթարացումն է եղել:

2016թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին նկատվել է Մաքսային միության տարածքում Հայաստանի առևտրի ծավալների աճ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ արտահանումը գրանցել է 55.2%-ի աճ՝ կազմելով 274 մլն դոլար՝ ավելի շատ, քան ողջ 2015թ. ընթացքում:

Ներմուծումն ավելացել է ընդամենը 2.9%-ով ու կազմել 719.1 մլն դոլար[13]: Եթե արտահանման աճը կարելի է համարել գործարար հատվածի առաջին արձագանքը ՄՄ անդամակցությանը, ապա ներմուծման չնչին փոփոխության պատճառը վերջնական սպառման ծավալների կրճատումն է Հայաստանում:

Նշենք, որ անդամակցությունը ՄՄ-ին չի վնասել Հայաստանի արտահանման ծավալներին դեպի երրորդ երկրներ: Այսպես, 2015թ. ի տարբերություն ՄՄ անդամ երկրների, դեպի երրորդ երկրներ արտահանումը գրանցել է աճ՝ 0.5%, իսկ 2016թ. երեք եռամսյակներում արտահանման ծավալների աճը կազմել է 12.7%: Երրորդ երկրներից ներմուծումը 2015թ. նվազել է 30.5%-ով, 2016թ. հունվար սեպտեմբերին՝ 2.8%-ով: Հիշեցնենք, որ դա ուղեկցվել է ներմուծման համախառն ծավալների նվազմամբ: Մաքսային միությանն անդամակցությունը որևէ դրական տեղաշարժ չի արձանագրել ուղղակի ներդրումների ներգրավման առումով: Անդամ 4 երկրներից 3-ի դեպքում 2015թ. օտարերկրյա ուղղակի ներդրումների զուտ հոսքը ունեցել է բացասական արժեք, իսկ Ղրղզստանն ընդհանրապես ներդրած կապիտալ չունի Հայաստանում:

2015թ. Ռուսաստանից կատարված ուղղակի ներդրումների զուտ հոսքը կազմել է -43.7 մլրդ դրամ, 2016թ. առաջին երեք ամիսներին ավելի շատ, քան ողջ նախորդ տարում՝ -55,3 մլրդ դրամ[14]:

Գրաֆիկ 6. ՀՀ արտաքին պարտքը



12. ՀՀ վիճակագրական տարեգիրք 2016, ԱՎԾ, http://armstat.am/file/doc/99499483.pdf

13. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի պաշտոնական կայք, http://www.eurasiancommission.org/ru/act/integr_i_makroec/dep_stat/tradestat/tables/intra/Pages/2016/09.aspx

14. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2016թ. հունվար-հոկտեմբերին, ԱՎԾ, http://armstat.am/file/article/sv_10_16a_420.pdf

Թ. Նոր Հարկային օրենսգիրք

2018թ. հունվարի 1-ից Հայաստանի Հանրապետությունում կգործի հարկային նոր օրենսգիրքը: Գլխավոր փոփոխություններից հարկ է նշել շրջանառության հարկի շեմի իջեցումը 116,7-ից մինչև 58.35 մլն դրամ, եկամտային հարկի նոր՝ տարբերակված դրույքաչափերի սահմանումը, ակցիզային հարկի բարձրացումը, գույքահարկի ու հողի հարկի հաշվարկն ըստ շուկայական գների, ինչպես նաև այլ փոփոխություններ՝ կապված ԱԱՀ-ի, շահութահարկի և մյուս հարկատեսակների հետ: Հարկային նոր օրենսգիրքը նպատակ ունի ավելացնել հարկային մուտքերը և նպաստել երկարաժամկետ տնտեսական աճին, սակայն մասնագետների գնահատմամբ՝ այն ոչ մի կերպ չի նպաստում ՓՄՁ ոլորտի զարգացմանը:

Գրաֆիկ 7. Օտարերկրյա ուղղակի ներդրումները Հայաստանում



Գրաֆիկ 8. Կենտրոնական բանկի արտարժութային ինտերվենցիաները



Գրաֆիկ 9. ՀՀ միջազգային պահուստների ծավալները



2. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

Ա. Տնային տնտեսությունների եկամտի և սպառողական վարքագծի փոփոխությունները

Տնային տնտեսությունների եկամուտները Հայաստանում վերջին 10 տարիներին շարունակաբար աճել են: Հատկապես զգալի աճ է տեղի ունեցել 2012թ.՝ 11.29%, և 2014թ.՝ 13.41%: 2015թ. նախորդ տարվա համեմատ եկամուտ-ները աճել են 4.48%-ով և մեկ շնչի հաշվով կազմել ամսական 52377 դրամ:

Դրամական եկամուտների մոտ 55%-ը 2015թ. կազմել են եկամուտները վարձու աշխատանքից՝ 28800 դրամ, երկրորդ ամենամեծ աղբյուրը կենսաթոշակներն ու նպաստներն են՝ 9284 դրամ (17.7%): 9-ական տոկոս են կազմում եկամուտները ինքնազբաղվածությունից և տրանսֆերտներից (Գրաֆիկ 10):

Ազգային վիճակագրական ծառայության տվյալներով՝ 2011-2015թթ. շարունակաբար աճել են նաև ֆիզիկական անձանց սպառման ծավալները: Մեկ անձի գծով ամսական սպառումը 2015թ. նախորդ տարվա համեմատ աճել է 3.9%-ով և կազմել 42867 դրամ: Հետաքրքիր է, որ Համաշխարհային բանկի տվյալները փաստում են ոչ թե աճի, այլ 8.2% նվազման մասին: Կազմակերպության տվյալներով՝ մեկ անձի գծով տարեկան սպառումը 2015թ. կազմել է 2637 ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա 2874 դոլարի դիմաց: 2015թ. տնային տնտեսությունների ընդհանուր սպառման հարաբերությունը ՀՆԱ-ին կազմել է 77.3%՝ նախորդ տարվա 84.6%-ի փոխարեն:

Ինչ վերաբերում է սպառման կառուցվածքին, 2015թ. մեկ անձի հաշվով ամսական տեղի է ունեցել 14768 դրամի սննդամթերքի (34.4%), 14437 դրամ՝ ծառայությունների (33.7%), 8074 դրամ ոչ պարենային ապրանքների սպառում (18.8%) (Գրաֆիկ 11):

Գրաֆիկ 10. ՀՀ տնային տնտեսությունների դրամական եկամուտները



Գրաֆիկ 11. Մեկ անձի ամսական սպառման կառուցվածքը

Բ. Աղքատության և անհավասարություն փոփոխությունները

Աղքատության մակարդակի ամենամեծ նվազումը տեղի է ունեցել 2004-2008թ՝ 53.5%-ից մինչև 27.6%: Համաշխարհային տնտեսական ճգնաժամը կանգնեցրեց աղքատության կրճատման այդ միտումը, և 2008թ.-ից ի վեր աղքատությունը հնարավոր է եղել կրճատել ընդամենը 4.3%-ով: 2015թ. աղքատության մակարդակը կազմել է 29.8%, ծայրահեղ աղքատության մակարդակը՝ 2%:

Հայաստանի տարբեր բնակավայրերում աղքատության մակարդակը զգալիորեն տարբեր է: Քաղաքային բնակավայրերում 2015թ. աղքատությունը կազմել է 29.4%, գյուղական բնակավայրերում՝ 30.4%: Սակայն, միանգամայն այլ պատկեր է ստացվում, երբ Երևանը առանձնացնում ենք քաղաքային մյուս բնակավայրերում: Մայրաքաղաքում աղքատության մակարդակը 25% է, իսկ հանրապետության մյուս քաղաքներում այն ավելի բարձր է, քան գյուղական բնակավայրերում:

Ըստ մարզերի աղքատության մակարդակը ևս խիստ տարբեր է: Շիրակի մարզում աղքատությունը 2015թ. կազմել է 45.3%՝ 15.5%-ով բարձր հանրապետության միջին ցուցանիշից, մինչդեռ Արագածոտնի և Վայոց Ձորի մարզերում նույն ցուցանիշը կազմել է 16-17%:

Գրաֆիկ 12. Աղքատությունը Հայաստանում



Գրաֆիկ 13. Աղքատության
խորությունը և սրությունը 2008-2015թթ.



Գրաֆիկ 14. Աղքատությունը Հայաստանում.
Ջինիի գործակիցը (2008-2015թթ.)

Գ. Զբաղվածության և գործազրկության մակարդակը

Հայաստանի Հանրապետության աշխատանքային ռեսուրսները 2015թ. կազմել են 2.106 մլն մարդ, որից տնտեսապես ակտիվ բնակչությունը՝ 1.316 մլն մարդ: Զբաղվածների թիվը կազմել է 1.072 մարդ:

2015թ. գործազուրկների թվաքանակը 1000 մարդու հաշվով կազմել է 243.7 պրոմիլ: Գործազրկության մակարդակը աճել է և 2014թ. 17.6%-ի փոխարեն կազմել է 18.5%: Սա ամենաբարձր ցուցանիշն է վերջին 5 տարիներին: 2013թ. գործազրկության մակարդակը նվազել էր մինչև 16.2%, սակայն վերջին տարիներին այն շարունակաբար աճում է: 2016թ. հունվար-հունիս ամիսներին գործազրկությունը Հայաստանում կազմել է 18.4%[15]:

Գրաֆիկ 15. ՀՀ աշխատանքային ռեսուրսները և տնտեսապես ակտիվ բնակչությունը



Դ. Այլ հետևանքներ

Հայաստանի Հանրապետությունում սոցիալ-տնտեսական վիճակից բխող հետևանքներից կարևորագույնը արտագաղթն է: Բնակչության թիվը բնական շարժի դրական ցուցանիշի (2011-15թթ. միջինը՝ տարեկան 14,8 հազար մարդ) պայմաններում 2011-15թթ. ՀՀ մշտական բնակչությունն, ըստ պաշտոնական վիճակագրության, պակասել է 22.8 հազար մարդով:

Այս ընթացքում ամեն տարի միջինը 40 հազար ՀՀ քաղաքացի հատել է սահմանը և չի վերադարձել[16]: Համաշխարհային Տնտեսական ֆորումի գնահատականներով՝ Հայաստանը արտագաղթի պատճառով կորցրել է իր բնակչության 25%-ը[17]:

15. ՀՀ վիճակագրական տարեգիրք 2016՝ http://www.armstat.am/file/doc/99499383.pdf

16. https://www.weforum.org/agenda/2016/12/fifth-of-people-from-these-countries-live-abroad

17. https://www.weforum.org/agenda/2016/12/fifth-of-people-from-these-countries-live-abroad

Գրաֆիկ 16. ՀՀ զբաղվածների
և գործազուրկների թվաքանակ



Գրաֆիկ 17. Գործազրկության մակարդակը
Հայաստանում



3. Ի՞ՆՉ Է ՍՊԱՍՎՈՒՄ 2017Թ.

2015թ. ՀՆԱ-ի 3% աճից հետո տնտեսական ակտիվության ցուցանիշը սկսել է նվազել, հատկապես՝ 2016թ. կեսից: Հայաստանի տնտեսությունում օտարերկրյա ուղղակի ներդրումները արդեն երկրորդ տարին պակասում են, հատկապես ակտիվ հեռանում է ռուսական կապիտալը: Տնտեսության արտադրական հատվածը շարունակում է անկում ապրել, ինչի մասին փաստում է նաև ՀՆԱ-ի կառուցվածքում արդյունաբերության, գյուղատնտեսության և շինարարության ծավալների նվազումը: 2016թ. երկրորդ կեսում Կառավարությունը և ԿԲ-ն սկսեցին պատասխան քայլեր ձեռնարկել տնտեսական ակտիվությունը վերականգնելու ուղղությամբ, և դրանց արդյունքներն արդեն կարտացոլվեն 2017թ.: Արդյունաբերության ոլորտը ՀՆԱ-ի վրա դրական ազդեցություն կարող է ունենալ, եթե պահպանվեն գունավոր մետաղների, մասնավորապես՝ պղնձի բարձր գները համաշխարհային շուկայում:

Այնուամենայնիվ, ՀՆԱ-ի արտադրությունը գլխավորապես հենվում է առևտրի և ծառայությունների ոլորտի վրա, որի մասնաբաժինն արդեն անցել է 50%-ը: Հենց այս ճյուղից էլ 2017թ. հիմնականում կախված է լինելու ՀՆԱ-ն: 2017թ. համար ՀՀ Կառավարությունը և Արժույթի միջազգային հիմնադրամը կանխատեսում են ՀՆԱ-ի 3.2-3.4% աճ18,19: Սակայն, ստեղծված տնտեսական իրավիճակը թույլ է տալիս եզրակացնելու, որ նման աճի շատ դժվար է լինելու հասնել: Առավել հավանական է, որ տնտեսական աճը 2017թ. կտատանվի 2%-ի սահմաններում:

2016թ. տնտեսական իրողությունների շարքում դրական տեղաշարժերից մեկը արտահանման ծավալների աճն է՝ առաջին 3 եռամսյակներում գրեթե 20%-ով ավելի, քան նախորդ տարվա նույն ժամանակահատվածում: Ընդ որում, ի տարբերություն 2015թ.՝ նկատվում է արտահանման աճ ԵՏՄ գոտում՝ 55.2%, որը չի վնասել նաև արտահանման ծավալներին դեպի երրորդ երկրներ:

Գրաֆիկ 18. ՀՆԱ-ի կառուցվածքը՝
ըստ տնտեսության ճյուղերի



18. ՀՀ 2017թ. բյուջետային ուղերձ

19. World Economic Outlook - October 2017, WEF՝
http://www.imf.org/external/pubs/ft/weo/2016/02/pdf/text.pdf

Արտահանումը կարող է իրական ազդեցություն ունենալ Հայաստանի տնտեսության վրա, եթե ձեռք բերված աճի միտումներն էլ ավելի արագանան 2017թ. ընթացքում:

Հայկական դրամի փոխարժեքի հարաբերական կայունությունը վերջին 2 տարիներին հնարավոր եղավ պահել ներմուծման կտրուկ նվազման ու արտահանման ավելացման պայմաններում: Սակայն օտարերկրյա կապիտալի արտահոսքը և արտաքին պարտքի մարումների մեկնարկը 2017թ. կրկին ցնցումների կենթարկեն դրամը և հնարավոր է հետագա արժեզրկում, հատկապես, եթե տրանսֆերտները չավելանան:

Ընդհանուր առմամբ, ներմուծման և տրանսֆերտների կտրուկ անկման արդյունքում պարզ է դառնում, որ բնակչությունը ավելի քիչ է սպառել, ինչի մասին փաստում է նաև ՀԲ-ի տվյալները, իսկ դա նշանակում է կենսամակարդակի նվազում: 2017թ. բնակչության եկամուտների աճ հնարավոր է տրանսֆերտների ծավալների աճի դեպքում, ինչի համար պայմաններ են ստեղծվել Ռուսաստանի տնտեսության վիճակի բարելավման և ռուբլու փոխարժեքի՝ վերջին շրջանում գրանցված աճի տեմպերի պահպանման արդյունքում: Տնօրինվող եկամուտի որոշակի աճը կարող է ակտիվացնել ներքին սպառումը:

2016թ. Հայաստանում գրանցվեց գնանկում, որը բացատրվում էր տնօրինվող եկամուտների նվազմամբ: 2017թ. սպասելի է գների մակարդակի որոշակի աճ՝ կապված եկամուտների մակարդակի բարձրացման հետ: Սակայն, գնաճը հնարավոր է որոշակի զսպվի է գազի գների անկման արդյունքում: Սպառողական գների նվազում՝ առանց սպառման ծավալների կրճատման հնարավոր է միայն լայն սպառման մի շարք ապրանքային շուկաների ապամենաշնորհացման դեպքում, ինչի մասին պարբերաբար հայտարարում է ՀՀ վարչապետը: Այնուամենայնիվ, չնայած մի քանի առանձին դեպքերի՝ այդ գործընթացն, ամենայն հավանականությամբ, սահմանափակ բնույթ կկրի:

4. ԿԱՐՈ՞Ղ Է ՆԵՐԿԱՅԻՍ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԽՐԱԽՈՒՍԵԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ և ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Վերջին տարիների զարգացումները ցույց են տալիս, որ Հայաստանի Հանրապետությունում հասարակությունը առավել բուռն արձագանք է տալիս իշխանությունների այն քայլերին, որոնք անմիջապես վերաբերում են բնակչության եկա-մուտներին: Դրա մասին են փաստում 2013թ. Երևանի քաղաքային տրանսպորտի գների բարձրացման, 2015թ. էլեկտրաէներգիայի գների բարձրացման դեմ լայնամասշտաբ ցույցերը, որոնք պսակվեցին որոշակի հաջողություններով: Տնտեսական հարցերի շուրջ հասարակությունը լուրջ անվստահություն ունի գործող իշխանությունների նկատմամբ: Սակայն, փորձը ցույց է տալիս, որ այդ անվստահությունը իր որոշիչ ազդեցությունը չի ունենում ընտրությունների ժամանակ: Բանն այն է, որ տնտեսական ծանր վիճակի արդյունքում ստեղծված սոցիալական լարվածությունը շահարկվում է գործող իշխանությունների կողմից՝ ընտրակաշառքի և վարչական լծակի կիրառման միջոցով վերածվելով ընտրական քվեների: Աղքատության բարձր մակարդակը, բնակչության եկամուտների ցածր մակարդակը և դրանց աղբյուրների սահմանափակությունը քաղաքացիներին երկու տարբերակ է թողնում՝ հարմարվել կամ արտագաղթել:

Իշխանությունների ժամանակ երկար տարիներ երկրի տնտեսական համակարգը դիտվել է որպես հենարան, որի վրա հյուսվել ու զարգացել է իշխանական համակարգը, որի շուրջ մշակվել ու գործարկվել են իշխանության վերարտադրության մեխանիզմները: Տնտեսական բարեփոխումների հրամայականը բխել է հենց այս կարիքից, ինչի մասին են փաստում նաև բարեփոխումների բուռն շրջանը ընտրություններից առաջ և առավել ծանր տնտեսական որոշումների ընդունումը հետընտրական շրջանում:

2016թ. փոխեց տնտեսական հարցերի նկատմամբ վերաբերմունքը: Ապրիլյան 4-օրյա պա-

տերազմը ցնցեց գործող համակարգը և նոր շեշտադրումներ առաջ քաշեց Հայաստանի տնտեսության համար: Ակնհայտ դարձավ, որ Հայաստանի տնտեսությունը որոշակի բացեր ունի արձագանքելու անվտանգության այն մարտահրավերներին, որոնց կամա թե ակամա բախվելու է Հայաստանը: Սա որոշակիորեն վերաիմաստավորեց տնտեսության հանդեպ իշխանությունների վերաբերմունքը: Սկսվեց պետական կառավարման տարբեր օղակներում տարբեր մակարդակների ու ծավալների օպտիմալացման միջոցառումները: Սեպտեմբեր ամսին նշանակվեց նոր կառավարություն, որը կրկին որպես կարևոր սկզբունք որդեգրեց ծախսերի օպտիմալացումը, պետական միջոցների օգտագործման արդյունավետության բարձրացումը: Սկսվեց բաց տեքստով խոսվել երկրում կոռուպցիայի, տնտեսական մենաշնորհների և բազմաթիվ այլ երևույթների առկայության ու դրանց դեմ պայքարի մասին:

Թեև ձեռնարկված միջոցառումների արդյունավետությունն առայժմ ակնառու չէ, սակայն ակնհայտ դարձավ, որ հենց անվտանգության ապահովման խնդիրը կարող է վերաիմաստավորել տնտեսության կազմակերպման եղանակներն ու գործող մշակույթը երկրում: Հենց անվտանգության հարցն է նաև, որ տնտեսական հարաբերությունների վեկտորն ուղղել է դեպի Ռուսաստան, և այս երկրից Հայաստանի քաղաքական կախվածությունը աստիճանաբար ծավալվում է նաև տնտեսական դաշտում: Տնտեսական առումով Հայաստանը գրեթե ոչինչ չունի առաջարկելու Ռուսաստանին. Բավական է նշել, որ 2016թ. հունվար-հոկտեմբերին ՀՀ-ի առևտրաշրջանառությունը ԵՏՄ երկրների հետ չի գերազանցել կառույցի ներսում ընդհանուր շրջանառության 1%-ը[20]: Սակայն քաղաքական ազդեցությանը զուգահեռ այժմ կախված է այս երկրից նաև տնտեսապես՝ էներգակիրների մատակարարման, առևտրաշրջանառության ծավալների, տրանսֆերտների մեծ ծավալի պատճառով, ինչպես նաև ռուսական կապիտալի մեծ չափաբաժնով ՀՀ տնտեսությունում: Այս ամենը իր ֆորմալ ձևակերպումն է ստացել ԵՏՄ շրջանակներում:

2017թ. Հայաստանի համար լի է լինելու նոր մարտահրավերներով, որը ևս մեկ անգամ փորձության է ենթարկելու տնտեսական բարեփոխումների գնալու՝ իշխանությունների կամքն ու ճկունությունը: Տնտեսության սրընթաց անկումը, դրան զուգահեռ հնարավոր ռազմական գործողությունների վտանգը պահանջում է լուրջ քայլեր տնտեսության առողջացման համար: Միաժամանակ, 2017թ. ապրիլին նշանակված են խորհրդարանական ընտրություններ: Միայն տարվա երկրորդ կեսին հնարավոր կլինի գնահատել, թե ինչ քայլեր արեցին իշխանությունները տնտեսության վիճակը բարելավելու նպատակով, և արդյոք դրանք միայն նախընտրական միջոցառումներ էին, թե իրական փոփոխությունների սկիզբ:

5. ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐԸ

Հայաստանի տնտեսության վերականգնման համար անհրաժեշտ են լուրջ և համարձակ, քաղաքական կամք պահանջող քայլեր: Նախ, անհրաժեշտ է տնտեսությունը քաղաքական համակարգի ածանցյալի դերից ազատել և դարձնել առանձին համակարգ, որը կարող է ինքնուրույն զարգանալ ու կայանալ՝ ի վերջո նպաստելով նաև նույն քաղաքական համակարգի առողջացմանը:

Տնտեսական համակարգի վերականգնման առաջին քայլը պետական կառավարման տարբեր մարմիններում տիրող կոռուպցիայի վերացումն է: Transparency International կազմակերպության Կոռուպցիայի ընկալման զեկույցում Հայաստանը 167 պետությունների շարքում 2015թ. 95-րդն էր[21]: Հայաստանի Հանրապետությունում խոշոր բիզնեսը սերտաճել է պետական համակարգին և վայելում է մի շարք անօրինական արտոնություններ, որը խաթարում է տնտեսական մրցակցությունը երկրում:

20. Взаимная торговля, Январь-Октябрь 2016, Евразийская Экономическая комиссия; http://www.eurasiancommission.org/ru/act/integr_i_makroec/dep_stat/tradestat/tables/intra/Documents/2016/10/I201610_1.pdf

21. http://www.transparency.org/cpi2015

Կոռումպացվածության բարձր մակարդակով առանձնանում է նաև արդարադատության համակարգը, որը չի կարողանում համապատասխան իրավական դաշտ ապահովել բիզնեսի համար:

Տնտեսության զարգացման հաջորդ խոշոր արգելակիչը մի շարք շուկաներում առկա մենաշնորհն է: Լայն սպառման մի շարք ապրանքների արտահանումը կամ ներմուծումը Հայաստանում վերահսկվում է մի քանի ընկերությունների կողմից, ինչը խոչընդոտում է տվյալ ճյուղի զարգացումը, բարձրացնում է տվյալ ապրանքների գները և հանգեցնում կենտրոնացումների աճի ու եկամուտների անհավասարության բարձրացման:

ՀՀ արտահանումը արդեն երկար տարիներ չի կարողանում զգալի թռիչք արձանագրել ու էական դեր ստանձնել տնտեսության զարգացման գործում:

Անհրաժեշտ է ստեղծել արտահանման աջակցության պետական համակարգ, ինչպես նաև Հայաստանի արտահանման հնարավոր շուկաները դարձնել առավել բազմազան:

Վերջին տարիներն առանձնացել են Հայաստանից օտարերկրյա կապիտալի արտահոսքով: Արտաքին ներդրողի համար անհրաժեշտ է ստեղծել օրենսդրական պաշտպանության գործուն համակարգ և ազատ մրցակցային պայմաններ: Միջավայրի բարելավման, ինչպես նաև հայկական սփյուռքի ռեսուրսների օգտագործման արդյունքում հնարավոր է ներդրումների նոր ալիք ներգրավել Հայաստան:

Հայաստանի համար կարևոր է նաև տնտեսական կապերի դիվերսիֆիկացումը ԵՏՄ-ից դեպի ԵՄ, Մերձավոր և Հեռավոր Արևելք: Մասնավորապես, էական փոփոխություններ կարող է առաջացնել Իրանի հետ տնտեսական հարաբերությունների հետագա զարգացումը և հատկապես այս երկրի հետ տրանսպորտային հաղորդակցության խորացումը Հյուսիս-Հարավ մայրուղու, ինչպես նաև ծրագրային փուլում գտնվող երկաթուղու շահագործման արդյունքում: Սա հնարավորություն կտա հարավը կապել Ռուսաստանին՝ Վրաստանի միջոցով և Եվրոպային՝ Սև Ծովի միջոցով՝ աշխուժացնելով Հայաստանի տնտեսությունը և ամրապնդելով երկրի դիրքերը տարածաշրջանում: Կարևոր քայլ կարող է դառնալ նաև 2013թ. Ասոցացման համաձայնագրի ստորագրման ձախողումից հետո ԵՄ-ի հետ տնտեսական նոր որակի հարաբերությունների կառուցումը:

Տնտեսության վերակենդանացնող գործիքներից կարող է դառնալ նաև էներգետիկ համակարգի կառուցվածքային ձևափոխումը: Այսօր ՀՀ տնտեսությունը էներգակիրների մասով մեծ կախվածություն ունի Ռուսաստանից, սակայն գազի այլընտրանքային մատակարարի ներգրավումն ի դեմս Իրանի, էլեկտրաէներգիայի սեփական միջոցների լայն կիրառումը կարող է էապես ազդել էներգետիկ համակարգի ինքնուրույնության բարձրացմանը և խթանել տնտեսական զարգացումը:

Հեղինակի մասին

«Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոնը 2014թ. փետրվարին գրանցվել է, որպես հասարակական կազմակերպություն: Կենտրոնի նպատակներն ուղղված են Հայաստանի սոցիալական, տնտեսական, հասարակական, քաղաքական և այլ ոլորտների արդյունավետ զարգացմանը՝ հետազոտությունների իրականացման, կրթական ծառայությունների և խորհրդատվության տրամադրման միջոցով:

Հրապարակողի մասին

Ֆրիդրիխ Էբերտ Հիմնադրամ / Հայաստանյան գրասենյակ
Մոսկովյան փողոց 31 / 0002 Երևան

Պատասխանատու՝
Ֆելիքս Հեթթ
Հեռ՝ +374 10 53 69 13
http://www.fes-caucasus.org/

Հրապարակումները պատվիրել՝
anna@fes.am

Ֆրիդրիխ Էբերտ Հիմնադրամի կողմից հրապարակված նյութերի կոմերցիալ օգտագործումը չի թույլատրվում:

Ֆրիդրիխ Էբերտ Հիմնադրամի հայաստանյան գրասենյակը Հարավային Կովկասի տարածաշրջանային գրասենյակներից մեկն է, այն իրականացնում է Հայաստանին վերաբերող ծրագրերը Թբիլիսիի տարածաշրջանային գրասենյակի հովանու ներքո:

Հարավային Կովկասում ՖԷՀ-ը.

- ստեղծում և պահպանում է կապը ոչ միայն գործընկերների, այլև կառավարության, ակադեմիական, փորձագիտական շրջանակների, ՀԿ-ների, արհմիությունների, միջազգային կազմակերպությունների ու մամուլի և տարբեր ոլորտների կարևոր դերակատարների հետ,
- մշակում, իրականացնում մի շարք ծրագրեր իր գերակա երեք ուղղություններով՝ տեղական և միջազգային գործընկերների հետ սերտ համագործակցության շնորհիվ,
- վերահսկում և վերլուծում է քաղաքական զարգացումները բոլոր երեք երկրներում՝ տեղական, գերմանական և եվրոպական փորձագետների, քաղաքական գործիչների, գործընկերների և շահագրգիռ հանրության լայնածավալ ցանցի ստեղծման նպատակով:

Հիմնական թեմաները.

- Մասնակցություն և ժողովրդավարություն
- Սոցիալական արդարություն, տնտեսություն և աշխատանք
- Խաղաղություն և անվտանգություն

Հոդվածի բովանդակության և նրանում արտահայտված կարծիքների համար պատասխանատվությունը կրում են առանձին բաժինների հեղինակները: